




ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Խոսք ընթերցողին 3
- Հիմնական մակրոտնտեսական
ցուցանիշները 4
- Համախմբված բյուջե և պետական բյուջե 9
- Պետական բյուջեի եկամուտները 13
- Պետական բյուջեի ծախսերը 20
- Պետական բյուջեի դեֆիցիտը
(պակասուրդը) 25
- Պետական պարտքը 27

Խոսք ընթերցողին

- Սույն ուղեցույցի նպատակն է՝ ընդհանուր գծերով և մատչելի կերպով տեղեկացնել հանրությանը 2017 թվականին տնտեսությունում արձանագրված հիմնական միտումների և պետական բյուջեի կատարման վերաբերյալ: Ուղեցույցում ներկայացված են վերջին 5 տարիներին տնտեսական աճի, գնաճի, գործազրկության մակարդակի, պետության ստացած եկամուտների, դրանց օգտագործման ուղղությունների և պետական պարտքի հիմնական ցուցանիշները, ինչպես նաև երկրի տնտեսությունը բնութագրող մի շարք այլ ցուցանիշներ, որոնք կարող են հետաքրքրել քաղաքացիներին: Առավել մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք-էջում հրապարակվող՝ ՀՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններից հետևյալ հղումով՝

http://www.minfin.am/hy/page/byujei_hashvetvutyun1/:

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները


- Որպես երկրի տնտեսական աճը բնութագրող հիմնական ցուցանիշ օգտագործվում է Համախառն ներքին արդյունքի (այսուհետ՝ ՀՆԱ) աճը: ՀՆԱ-ն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում երկրի ներսում արտադրված պատրաստի ապրանքների և ծառայությունների շուկայական արժեքը:



- 2017 թվականին ՀՆԱ-ն կազմել է 5 տրիլիոն 580.1 մլրդ դրամ կամ 11 մլրդ 559.7 մլն ԱՄՆ դոլար*: Բնակչության 1 շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմել է 1 մլն 869.1 հազ. դրամ կամ 3872 ԱՄՆ դոլար, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է դրամային արտահայտությամբ՝ 10.4%-ով, դոլարային արտահայտությամբ՝ 9.9%-ով:


* ՀՀ ԱՎԾ կողմից «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թվականի հունվար-մարտին» զեկույցում (հրապարակվել է 2018թ. ապրիլի 30-ին) հրապարակվել են ՀՆԱ-ի՝ 2016 թվականի վերջնական և 2017 թվականի վերանայված ցուցանիշները, որոնք կազմել են համապատասխանաբար 5067.3 մլրդ դրամ (10546.1 մլն ԱՄՆ դոլար) և 5568.9 մլրդ դրամ (11536.5 մլն ԱՄՆ դոլար):

Գծապատկեր 1. ՀՆԱ-ն բնակչության 1 շնչի հաշվով 2013-2017թթ., ԱՄՆ դոլար




- 2017 թվականին Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է ՀՆԱ-ի 7.5% աճ՝ կանխատեսված 3.2%-ի փոխարեն, որին առավելապես նպաստել է ծառայությունների ոլորտում արձանագրված աճը:

Գծապատկեր 2. Համախառն ներքին արդյունքի աճի դինամիկան 2013-2017թթ.



- 2017 թվականի հանրապետությունում արձանագրվել է 2.6% 12-ամսյա գնաճ, որը հիմնականում պայմանավորված է եղել պարենային ապրանքների գների աճով:


Գծապատկեր 3. 12-ամսյա գնաճի դինամիկան 2013-2017թթ.



- 2017 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձը 2016 թվականի նկատմամբ աճել է 3.3%-ով՝ կազմելով 195074 դրամ: Ցուցանիշը պետական և ոչ պետական հատվածներում աճել է համապատասխանաբար 0.8%-ով և 4.1%-ով՝ կազմելով 164368 դրամ և 231777 դրամ: Իրական աշխատավարձը 2016 թվականի համեմատ աճել է 2.3%-ով:
- Գործազրկության մակարդակը 2017 թվականին նվազման միտում է ցուցաբերել՝ նվազելով 0.2 տոկոսային կետով, և կազմել է 17.8%: Գործազրկության մակարդակի նվազումն ուղեկցվել է զբաղվածների թվի 0.6% ավելացմամբ:
- Արտաքին ապրանքաշրջանառությունը 2017 թվականին կազմել է 6425.5 մլն ԱՄՆ դոլար և նախորդ տարվա համեմատ աճել է 26.9%-ով: Տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման ծավալների զգալի աճ. արտահանումն աճել է 25.2%-ով՝ կազմելով 2242.9 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 27.8%-ով՝ կազմելով 4182.7 մլն ԱՄՆ դոլար:

Համախմբված բյուջե և պետական բյուջե


- Պետական բյուջեն և համայնքների բյուջեները կազմում են համախմբված բյուջեն՝ բացառած միջբյուջետային փոխանցումները: 2017 թվականին ՀՀ համախմբված բյուջեի եկամուտները կազմել են 1 տրիլիոն 276.8 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 1 տրիլիոն 541.6 մլրդ դրամ: Այսինքն՝ յուրաքանչյուր բնակչի հաշվով համախմբված բյուջեի ծախսերը կազմել են 517.4 հազ. դրամ, որից 397.7 հազ. դրամը ֆինանսավորվել է ֆիզիկական անձանց և կազմակերպությունների կողմից վճարված հարկերի ու տուրքերի հաշվին: Համախմբված բյուջեի դեֆիցիտը 2017 թվականին կազմել է 264.8 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 4.7%-ը:



- Նախորդ տարիներին, ինչպես նաև 2017 թվականի առաջին եռամսյակում, պետական բյուջեով արտահանողներին ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վերադարձը նախատեսված էր բյուջեի ծախսերում, իսկ երկրորդ եռամսյակից սկսած այն հիմնականում իրականացվել է եկամուտների նվազեցման եղանակով, ուստի համադրելի ցուցանիշներ ստանալու նպատակով նախորդ տարիների հետ բյուջեի եկամուտների և ծախսերի համեմատությունները բերվում են առանց ԱԱՀ-ի վերադարձված գումարների:

	2013	2014	2015	2016	2017
Պետական բյուջեի եկամուտներ, մլրդ դրամ	1,046.2	1,116.9	1,124.0	1,122.5	1,221.1
ՀՆԱ-ի մեջ, %	23.0%	23.1%	22.3%	22.2%	21.9%
Պետական բյուջեի ծախսեր, մլրդ դրամ	1,117.8	1,207.2	1,365.3	1,400.4	1,488.2
ՀՆԱ-ի մեջ, %	24.5%	25.0%	27.1%	27.6%	26.7%
Պետական բյուջեի դեֆիցիտ, մլրդ դրամ	71.5	90.3	241.3	278.0	267.0
ՀՆԱ-ի մեջ, %	1.6%	1.9%	4.8%	5.5%	4.8%


Գծապատկեր 4. ՀՀ պետական բյուջեի ցուցանիշները 2013-2017թթ., մլրդ դրամ



Պետական բյուջեի եկամուտները


- 2017 թվականին պետական բյուջե են մուտքագրվել 1 տրիլիոն 237.8 մլրդ դրամ փաստացի եկամուտներ՝ ապոհովելով ՀՀ կառավարության ճշտված ծրագրով նախատեսված ցուցանիշի 93.7%-ը: Բյուջեի եկամուտներից 1 տրիլիոն 158 մլրդ դրամը կազմել են հարկերը և տուրքերը, 14.6 մլրդ դրամը՝ միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից տրամադրված պաշտոնական դրամաշնորհները, 65.2 մլրդ դրամը՝ այլ եկամուտները, որոնց գծով ճշտված ծրագրով սահմանված ցուցանիշները կատարվել են համապատասխանաբար 96.1%-ով, 41.7%-ով և 80.4%-ով:

Գծապատկեր 5. ՀՀ 2017թ. պետական բյուջեի փաստացի եկամուտների կառուցվածքը, մլրդ դրամ




- Հարկային եկամուտների ու տուրքերի գծով մուտքերում ամենամեծ տեսակարար կշիռն են ունեցել ավելացված արժեքի հարկը՝ 35.1% կամ 406.6 մլրդ դրամ, և եկամտային հարկը՝ 29.5% կամ 341.5 մլրդ դրամ:

Գծապատկեր 6. ՀՀ 2017թ. պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտների կառուցվածքը, մլրդ դրամ և կշիռը հարկային եկամուտներում




- 2017 թվականին ստացված պաշտոնական դրամաշնորհների խոշորագույն դոնորներ են հանդիսացել Եվրոպական միությունը, Ռուսաստանի Դաշնությունը, ԱՄՆ-ը, Համաշխարհային բանկը, Գերմանիայի զարգացման վարկերի բանկը:

Գծապատկեր 7. 2017թ. ստացված պաշտոնական դրամաշնորհներն ըստ դոնորների, մլն դրամ և կշիռն ընդհանուր դրամաշնորհներում




- Այլ եկամուտների հիմնական աղբյուր են հանդիսացել ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից մուտքերը, պետության տված վարկերի ու ավանդների դիմաց ստացված տոկոսավճարները:

Գծապատկեր 8. 2017թ. ստացված այլ եկամուտների աղբյուրները, մլն դրամ և կշիռն այլ եկամուտներում




- 2016 թվականի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 8.8%-ով կամ 98.7 մլրդ դրամով: Մասնավորապես՝ հարկերի ու պետական տուրքերի և այլ եկամուտների գծով մուտքերն աճել են համապատասխանաբար 10.7%-ով (110.3 մլրդ դրամով) և 8.6%-ով (5.2 մլրդ դրամով), իսկ պաշտոնական դրամաշնորհները նվազել են 53.4%-ով (16.8 մլրդ դրամով):

Գծապատկեր 9. ՀՀ պետական բյուջեի եկամուտները 2013-2017թթ., մլրդ դրամ




Գծապատկեր 10. ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտների և հարկերի ու տուրքերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2013-2017թթ.




Պետական բյուջեի ծախսերը

- 2017 թվականին ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերը կազմել են 1 տրիլիոն 504.8 մլն դրամ՝ ապահովելով ՀՀ կառավարության ճշտված ծրագրով նախատեսված ցուցանիշի 96.4%-ը: Հարկ է նշել, որ չնայած բյուջետային ծախսերի համեմատաբար ցածր կատարողականին՝ հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է պետական բյուջեի ծախսային ծրագրերի շրջանակներում պետական մարմինների կողմից սահմանված կարգով ստանձնած պարտավորությունների ամբողջական և ժամանակին կատարումը:

Գծապատկեր 11. ՀՀ 2017թ. պետական բյուջեի փաստացի ծախսերի բաշխումն ըստ տնտեսագիտական հոդվածների, մլրդ դրամ և կշիռը ծախսերում



Գծապատկեր 12. ՀՀ 2017թ. պետական բյուջեի փաստացի ծախսերի բաշխումն ըստ ոլորտների, մլրդ դրամ և կշիռը ծախսերում




- 2016 թվականի համեմատ պետական բյուջեի ծախսերն աճել են 6.3%-ով կամ 87.8 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է մեքենաների և սարքավորումների ձեռք բերման, պահպանման և հիմնանորոգման ու պարտքի սպասարկման ծախսերի աճով: Ըստ ոլորտների պետական բյուջեի ծախսերի աճը հիմնականում արձանագրվել է պաշտպանության, պետական պարտքի գծով գործառնությունների և սոցիալական պաշտպանության ծախսերում:
- Պետական բյուջեի ծախսերի 27.2%-ը՝ 409 մլրդ դրամն ուղղվել է սոցիալական պաշտպանության բնագավառի ֆինանսավորմանը: Մասնավորապես՝ 280.3 մլրդ դրամ են կազմել կենսաթոշակները: 130.8 մլրդ դրամ տրամադրվել է նպաստներին, որից 843.6 մլն դրամը՝ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից:
- 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառված է եղել 520617 կենսաթոշակառու և նպաստառու, որոնք ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնողի դեպքում նպաստներ ստացողներն են:
- Աշխատանքային կենսաթոշակի միջին չափը կազմել է 40296 դրամ:

- 2017 թվականին ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված շուրջ 125000 ընտանիքներից ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստացել են ամսական միջինում 103723-ը՝ ընդհանուր հաշվառված ընտանիքների շուրջ 83%-ը, իսկ եռամսյակային հրատապ օգնություն՝ միջինում 5321 ընտանիք կամ ընդհանուր հաշվառվածների 4.3%-ը: Նպաստի միջին չափը կազմել է 31350 դրամ:
- 2017 թվականին առողջապահության ոլորտում ՀՀ պետական բյուջեի միջոցներով կատարվել են 83.2 մլրդ դրամ ծախսեր՝ ապահովելով ծրագրի 97.1%-ը: Միջոցների հիմնական մասը՝ համապատասխանաբար 47.9%-ը (39.8 մլրդ դրամ) և 32%-ը (26.6 մլրդ դրամ) ուղղվել է հիվանդանոցային ծառայությունների և արտահիվանդանոցային ծառայությունների ֆինանսավորմանը:
- 2017 թվականին կրթության բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 124.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.6% կատարողական: Միջոցների 43.9%-ը՝ 54.6 մլրդ դրամ ուղղվել է միջնակարգ ընդհանուր կրթությանը, 24%-ը կամ 29.9 մլրդ դրամ՝ նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթությանը, 9.6%-ը կամ 12 մլրդ դրամ՝ բարձրագույն կրթությանը:

Պետական բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը)

- 2017 թվականին ՀՀ պետական բյուջեն կատարվել է 267 մլրդ դրամ պակասուրդով՝ 11.2%-ով գերազանցելով տարեկան ճշտված ծրագիրը, ինչը պայմանավորված է եկամուտների նկատմամբ ծախսերի առավել բարձր կատարողականով: 2016 թվականին ՀՀ պետական բյուջեն կատարվել էր շուրջ 278 մլրդ դրամ պակասուրդով, այսինքն՝ 2016 թվականի համեմատ պակասուրդի մեծությունը նվազել է 3.9%-ով՝ պայմանավորված ծախսերի նկատմամբ եկամուտների առաջանցիկ աճով: Պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը 2017 թվականին կազմել է 4.8%՝ կանխատեսված 2.8%-ի և 2016 թվականի 5.5%-ի դիմաց:

Գծապատկեր 13. ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը 2013-2017թթ., մլրդ դրամ



■ Պետական բյուջեի դեֆիցիտ
■ Արտաքին աղբյուրներ

■ Ներքին աղբյուրներ
◆ Դեֆիցիտ / ՀՆԱ

Պետական պարտքը

- 2017 թվականի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 3,279.6 մլրդ դրամ (6,774.6 մլն ԱՄՆ դոլար)) կամ ՀՆԱ-ի 58.9%-ը, որից ՀՀ կառավարության պարտքը՝ 2,988.4 մլրդ դրամ (6,173.1 մլն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 53.7%-ը, իսկ ՀՀ կենտրոնական բանկի պարտքը՝ 291.2 մլրդ դրամ (601.5 մլն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 5.2%-ը: 2017 թվականի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ անվանական արտահայտությամբ աճել է 404 մլրդ դրամով կամ 14%-ով (832.5 մլն ԱՄՆ դոլարով): Ընդ որում, դա հիմնականում տեղի է ունեցել ՀՀ կառավարության պարտքի աճի հաշվին, որը կազմել է 357 մլրդ դրամ կամ 13.6%, իսկ ՀՀ կենտրոնական բանկի պարտքն աճել է 47 մլրդ դրամով կամ 19.2%-ով:
- 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին պետական պարտքն անվանական արժեքով կազմել է 619.5 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 11.1%-ը, այդ թվում՝
 - ռեզիդենտների կողմից ձեռք բերված պետական գանձապետական պարտատոմսերի ծավալը կազմել է 540 մլրդ դրամ.

- ռեզիդենտների կողմից ձեռք բերված արտարժութային պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 75.1 մլրդ դրամ:
- ՀՀ կառավարության կողմից տրամադրված ներքին երաշխիքների ծավալը կազմել է շուրջ 4.4 մլրդ դրամ:
- 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 2,660.1 մլրդ դրամ (5,494.9 մլն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 47.8%-ը՝ 2016 թվականի 2,325.6 մլրդ դրամի (4,805.6 մլն ԱՄՆ դոլարի) և 45.9%-ի դիմաց: Պարտքի հիմնական մասը՝ 2,368.9 մլրդ դրամը (4,893.4 մլն ԱՄՆ դոլարը) ՀՀ կառավարության պարտավորություններն են, 291.2 մլրդ դրամը (601.5 մլն ԱՄՆ դոլարը)՝ ՀՀ կենտրոնական բանկի վարկային պարտավորությունները:
- Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ արտաքին պետական պարտքն աճել է 689.3 մլն ԱՄՆ դոլարով (334.5 մլրդ դրամով)՝ 14.3%-ով, և դրա տեսակարար կշիռը ՀՀ պետական պարտքի կառուցվածքում գրեթե մնացել է անփոփոխ՝ 80.9%-ից հասնելով 81.1%-ի: Ընդ որում, հիշյալ աճը մեծամասամբ արձանագրվել է ի հաշիվ ՀՀ կառավարության արտաքին պարտքի, որն աճել է 592.5 մլն ԱՄՆ դոլարով՝ ապահովելով ընդհանուր աճի 85.9%-ը:

Գծապատկեր 14. ՀՀ պետական պարտքը 2013-2017թթ., մլրդ դրամ

